

ՉԱՐԵԼ ԲՈՅԱԶՅԱՆ
(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Տ. Գ. ԽՈՐՇԻԴՅԱՆ

Չարել Բոյաջյանը արևմտահայ մտավորականության այն սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից էր, որոնք գրական-հասարակական կյանքի ասպարեզ մտան պատմական անբարենպաստ պայմաններում, XIX դ. վերջում և XX դարի սկզբին, մի ժամանակահատվածում, որը հայ ժողովրդի պատմության ամենաօրհասական շրջաններից մեկն էր:

Դարասկզբին Բոյաջյանը, արևմտահայ մշակութային առաջավոր շատ գործիչների նման, իր գրական գործունեությամբ աշխատում էր Եվրոպայի հասարակայնությանը ներկայացնել դարերի խորքից եկող հայ ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքները: Անձնական մտերմությունը, բարեկամական համագործակցությունն ու նամակագրական կապը Ա. Չոպանյանի հետ վերջնականապես ձևավորեցին Չ. Բոյաջյանի հասարակական և գրական-գեղագիտական գործունեության զաղափարական ուղղվածությունը:

Չարել Բոյաջյանը ծնվել է 1872 կամ 1873 թ., Դիարբեքիում: Արվեստագիտուհու կենսագիրներից ոչ մեկը չի նշել նրա ծննդյան տարեթիվը: Բոյաջյանի մտերիմ բարեկամներից բանասեր Անդրանիկ Պետիկյանը ենթադրում է, թե նա մահացել է 80 տարեկան հասակում, ըստ այդմ Բոյաջյանը պետք է որ ծնված լինի 1877 թ.: Սակայն Լոնդոնի հայ համայնքի խորհուրդը իր 1957 թ. հունվարի 26-ի ծանուցագրում խոր ցավով հայտնում է, որ «ճանաչված նկարիչ, արձակագիր և բանաստեղծուհի Բոյաջյանը մեզանից հեռացավ 85 տարեկան հասակում»¹: Հավանաբար հավաստի պետք է համարել այս հաղորդումը, քանի որ Լոնդոնի հայ համայնքի խորհուրդը անշուշտ, պետք է որ փաստաթղթերով ստուգած լիներ Բոյաջյանի ծննդյան տարին:

Բոյաջյանը ծնվեց մի այնպիսի գերդաստանում, որտեղ նյութական և բարոյական բոլոր հիմքերը կային նրան ժամանակի առաջադեմ մտայնությամբ դաստիարակելու համար: Հայրը՝ Թուրքիայում Անգլիայի փոխհյուպատոս Թոմաս Բոյաջյանը, արևմտահայության բազմակողմանիորեն զարգացած, առաջադեմ մտավորականներից մեկն էր: Մայրը՝ Կատերինա Բոյաջյանը սերում էր անգլիացի հայտնի բանաստեղծ Սամուել Ռոջերսի (1763—1855) ժառանգներից: Բոյաջյանը մի առիթով այն կարծիքն է հայտնել, թե իր բանաստեղծական ձիրքը ժառանգաբար ստացել է մորենական պապից:

Գրքի և գրականության նկատմամբ վաղ հասակից սեր արթնացնելու համար Բոյաջյանը պարտական է ամենից առաջ իր հոգատար ծնողներին: Անգլիական գրականության նկատմամբ նրա սրտում սիրո սերմեր է ցանել

¹ ՀՍՍՀ Պետ. կենտր. արխիվ, Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, № 412, ց. 1, գ. 985, թ. 4:

անգլուհի մայրը: Բանասեր Ա. Պետիկյանին ուղղված Բոյաջյանի նամակներից տեղեկանում ենք, որ տասնվեց տարեկան հասակում ինքը ոչ միայն ընթերցել էր Չոսերի, Շեքսպիրի, Միլտոնի, Սպենսերի, Բայրոնի, Ռոջերսի և այլ բանաստեղծների գործերը, այլև նրանց ստեղծագործություններից շատերը անգիր գիտեր: Բսկ հայոց լեզվի և հայ բազմադարյան գրականության նկատմամբ տածած սիրո համար բանաստեղծուհին պարտական է իր առաջին ուսուցիչը հանդիսացող հայրենասեր հորը՝ Թոմաս Բոյաջյանին:

Թուրքիայի դպրոցների անմխիթար վիճակի պատճառով Բոյաջյանի ծնողները ստիպված էին դստեր կրթության և դաստիարակության հոգսերը անձամբ իրենց ուսերի վրա վերցնել և տնային պայմաններում ծրագրված ու սիստեմատիկ աշխատանքով նրան սովորեցնել աշխարհագրություն և պատմություն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, տաճկերեն, գերմաներեն և ռուսերեն:

1895 թ. հայկական կոտորածները խախտեցին երջանիկ ընտանիքի անդորրությունը: Անդլիայի փոխհյուպատոս Թոմաս Բոյաջյանը 1894 թ. Սասունի ղեկավարի ժամանակ Թուրքական բարբարոսությունները մերկացնող բազմաթիվ ղեկուցադրեր էր հղել Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը, սակայն Թուրքիայի ներքին գործերին շփոթամտելու՝ Լվրոպական պետությունների հանցավոր և երեսպաշտ քաղաքականության թողտվությամբ սուլթանհամիդյան ղինված բանդաները անարգել շարունակեցին իրենց գործունեությունը:

Բոյաջյանները, լինելով անգլիահայատակ, այդ խառնակ օրերին թողնում են իրենց բնակավայրը և Մալաթիայի, Սվադի. Թոքատի ու Ամասիայի վրայով շարժվում են դեպի Սամսոն, որպեսզի նավով մեկնեն Պոլիս: Այնուհետև Ջաբել Բոյաջյանը մշտապես հաստատվում է Լոնդոնում:

Ճանապարհին ամենուրեք նրանց ուղեկցում էին տարաբախտ հայերի աղերսագին խնդրանքները. «Երբ դուք հասնեք Եվրոպա, պատմեցեք նրանց այն բոլորի մասին, ի՞նչ դուք տեսնում եք, և խնդրեցեք նրանց մի բան ձեռնարկել մեր փրկության համար»²:

Բոյաջյանը այս բոլորը ցավով գիտելով և խորապես վերապրելով, երգվեց իրեն ամբողջովին նվիրել իր տառապած ազգի դատի պաշտպանությանը:

1901 թ. Լոնդոնում, անգլերեն լեզվով, Բոյաջյանը հանդես եկավ «Եսթեր» ստեղծագործությամբ: Պոլսում ապրող իր ազգականներին հալածանքի վտանգին շենթարկելու նպատակով նա գիրքը հրատարակեց Վարդենի ծածկանվան տակ: Վավերագրական վեպի հավաստիություն ունեցող այս երկի համար հենք են ծառայել հիմնականում 1894 թ. Սասունի կոտորածներին հաջորդող ղեկավարը: Նկարագրվող իրադարձություններին լավատեղյակ լինելով, հեղինակը փաստադրական հարուստ տվյալներով և գեղարվեստական վառ երևակայությամբ ստեղծել է ժամանակի և միջավայրի կոլորիտը:

30 գողտրիկ նովել-գլուխներից կազմված այս ստեղծագործությունը մի իրական կյանքի ղեղարվեստական նկարագրություն է, որտեղ ղեկավարի հաջորդական զարգացմամբ կերպավորվում է հայ աղջկա տառապանքներով լի կյանքը, մի կերպար, որը իր մեջ խտացնում է ժողովրդի ուժը և թուլությունը, ցասումն ու բողոքը, խոշտանգումն ու մարտիրոսացումը աբդուհամիդյան

² «Արարատ» (անգլերեն), Լոնդոն, 1914, № 17, էջ 177:

տիրապետության մղձավանջային օրերին: Բոյաջյանը այս երկով «բաղաբակիրթ» և «բարեպաշտ» Եվրոպայի աչքի առջև կատարված հայության զանգվածային ցեղասպանության համար հատուցում էր պահանջում և հանցագործներին անհապաղ պատժելու հարցն էր առաջ քաշում:

«Եսթեր» վեպը ժամանակի գրական երևույթներից էր, այն Եվրոպայի գրական հասարակայնության շրջանում մեծ ընդունելություն գտավ և անգլիական «Մագամ» թերթի վկայությամբ՝ «իր ժամանակին մեծ աղմուկ հանեց»³: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ լույս տեսնելուց հետո վեպը անմիջապես թարգմանվեց գերմաներեն և տպագրվեց Հայպոլիտում: «Եսթերը» թարգմանվել է նաև հայերեն, սակայն ինչ-ինչ պատճառներով չի տպագրվել:



Գրական-գեղարվեստական ստեղծագործություններից բացի դարասկզբին Եվրոպական մի քանի լեզուների տիրապետող Բոյաջյանը գրավոր ու բանավոր խոսքով բազմիցս հանդես եկավ Անգլիայում, հրապարակախոսի և հրապարակագրի իր տաղանդը ի սպաս դնելով հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործին: Նրա այդ ձիրքն ու խանդավառությունը բարձր էր գնահատում լորդ Զ. Բրայսը, որ հայկական հարցին վերաբերող յուրաքանչյուր միջոցառմանը մասնակցելիս իր հետ տանում էր Զարեկ Բոյաջյանին: Նրան այդ խնդրում աջակցություն էր ցույց տալիս նաև իր անգլոֆիլ մայրը: Ա. Պետիկյանին ուղարկած նամակներից մեկում Բոյաջյանը օրինական հպարտությամբ գրում է, որ իր մայրը ոչ միայն սահուն կերպով գրում և կարդում էր հայերեն, այլև իր նման «հայ դատին ջերմեռանդ պաշտպան և ջատագով էր Անգլիո մեջ»:

Նույն տարիներին Բոյաջյանը նկարչական բարձրագույն դասընթացներ հաճախելիս հետաքրքրվում է նաև միջնադարյան հայկական մանրանկարչությամբ և միաժամանակ գործուն մասնակցություն ցուցաբերում Լոնդոնում «Հայկական միացյալ ընկերության» ձևավորման գործում:

Բոյաջյանի ծանոթությունը տիկին Աննա Բաֆֆու, մտերմությունը Արամ և Արշակ Բաֆֆինների հետ ապահովեց նրա ազատ մուտքը Բաֆֆինների տանրկազմակերպվող «միջոցառումներին»: Այստեղ Բոյաջյանը հանդիպել է բազմաթիվ նշանավոր հայրենասեր գործիչների հետ (Ստեփան Շահումյան, զորավար Անդրանիկ և ուրիշներ): Միաժամանակ նա հնարավորություն է ստացել ուսումնասիրելու Բաֆֆու թողած գրական ժառանգությունը:

³ Տե՛ս «Բազմավեպ», 1911, № 6, էջ 283:

Բոյաջյանի գեղանկարչական գործերի անդրանիկ ցուցահանդեսը բացվեց 1910 թ. վերջերին: Անգլիական «Մադամ» թերթի վկայությամբ Բոյաջյանը առաջին արևելքցի կինն էր, որին բախտ վիճակվեց իր նկարները ցուցադրել Լոնդոնի գեղանկարչական ցուցահանդեսների սրահում, մեծ վարպետների կտավների կողքին: Անգլիական պարբերական մամուլի կարծիքը Բոյաջյանի առաջին նկարչական ցուցահանդեսի վերաբերյալ այնքան նպաստավոր եղավ, որ հարկ համարվեց այն երկարաձգել:

«Տարակույս չկա, — գրում է «Մադամ» թերթը, — որ օր. Բոյաջյան, հիանալի բնանկարներու մեջ գերազանցելով հանդերձ, է՛ նմանապես վերին աստիճանի քաջ դիմանկարիչ մը, պատրաստ տիրանալու հաճույական արտահայտություններու և անհատական բնադրոշմներու»⁴: Երկու տարի անց Բոյաջյանը նկարեց Րաֆֆու դիմանկարը, որը նվիրեց հայ մեծ գրողի այրուն՝ տիկին Աննա Րաֆֆուն 1913 թ., գրողի մահվան 25-ամյակին նվիրված հոբելյանական նիստի ժամանակ (այդ նկաբը այժմ գտնվում է Երևանի Եղիշե Չարենցի անվան զրականության և արվեստի թանգարանում): Նույն նիստում Բոյաջյանը հանդես եկավ նաև «Րաֆֆին, նրա կյանքը և ստեղծագործությունները» թեմայով գեկուցմամբ, որտեղ մասնավորապես նշեց. «Րաֆֆու դրական բոլոր ստեղծագործությունները բողոքի կրքոտ ճիշ էին այն ստրկության ու անտարբերության հանդեպ, որի մեջ իր ազգը հեծում էր: Եվ ի՞նչ արդյունք ունեցավ այն: Արդյունքն այն եղավ, որ սառը կմախքները կյանքի էլեկտրական հոսանքով լիցքավորված հարույն առան և գիտակցության կրքոտ զգացումը եռ եկավ ազգի մարմնի մեջ: Նույնիսկ Հայաստանի հեռավոր խորշերում Րաֆֆու երկերը սրբություն պահպանվեցին և միին թաքստոցներում և գետնահարկերում, մոմի աղոտ լույսի տակ կարդացվեցին: Ապա գաղտնի տնից-տուն փոխադրվեցին... Եվ այդպես ազգը սկսեց ինքն իրեն ճանաչել, ինքն իր ուժերին հավատալ, նոր կյանքով լցված, համոզված ընթանալ դեպի ազգային կյանքի բարձունքները, դեպի իդեալական կյանքի բարձրակետը: Մեծ հայրենասեր էր Րաֆֆին, մի հայրենասեր, որը տառապում էր իր ժողովրդի ցավերով և անշափ սիրում էր իր հայրենի երկիրը, իր ազգի լեզուն ու նրա դարավոր պատմությունը»⁵:

Նիստի վերջում, դարձյալ Բոյաջյանի գործուն մասնակցությամբ, բեմադրվեց Րաֆֆու «Հայաստանի վերակառուցումը» ալեգորիկ երկախոսությունը, որը մեծ փոպասանը դրել էր դեռ 1855 թ.: Բոյաջյանը այն փոխադրել էր անգլերենի 1906 թ.: Նույն տարում այդ թատերգությունը բեմադրվել էր Հայկական ակումբի ուժերով և հանդիսականների ջերմ հավանությանը արժանանալով, կրկնվել էր նաև 1907 թ.: Բոլոր երեք ներկայացման մեջ էլ «Հայաստանի ողին» խորհրդանշող զլխավոր դերը կատարում էր ինքը՝ Բոյաջյանը, որի խաղը ականատեսները որակավորեցին ռոպես «անշափ արտիստիկ»:

Թատերգության հիմքում ընկած է իր պետականությունն ու քաղաքական անկախությունը կորցրած Հայաստանի վերակառուցման գաղափարը, որը մարմնավորվում է սիմվոլիկ կերպարների մեջ: Պիեսը շոշափում է այնպիսի ակտուալ խնդիր, որը տարագիր հայության հայրենաբաղձ զգացմունքներին

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 284:

⁵ «Արարատ», Լոնդոն, 1913, № 2, էջ 36:

համահնչյուն լինելով, բուռն ոգևորություն և աշխուժություն առաջացրեց լոնդոնյան գաղթօջախում: Անգլիայի կենտրոնական շատ նշանավոր լրագրեր իրենց էջերում մեծ դավաստով արտահայտվեցին այդ հանդիսավոր երեկոյի մասին ընդհանրապես և «Հայաստանի վերակառուցումը» ներկայացման մասին՝ մասնավորապես: Լրագրերից մեկը ներկայացումը մանրամասն նկարագրելուց և վերլուծելուց հետո ընդգծում էր. «Հատկապես պետք է նշել ներկայացման մեջ օր. Զ. Բոյաջյանի «Հայաստանի ոգու» դժվարին գերակատարումը, որը նա ներկայացրեց շատ հանդիստ և ինքնատիպ»⁶:

Որ ինքնուրույն արձակ և չափածո ստեղծագործություններից և գեղանկարչական աշխատանքներից բացի Բոյաջյանը զբաղվում էր նաև գրական-թարգմանական աշխատանքով: Նա նախ հույկական աղբյուրներից քաղելով անգլերեն թարգմանեց եզովպոսյան սքանչելի առակները: Ապա Րաֆֆու մահվան 25-ամյակի կապակցությամբ «Արարատի» 1913 թ. № 2-ում հանդիպում ենք «Սամվել» վեպի «Արաքսի որոգայթները» հատվածի բոյաջյանական գեղեցիկ թարգմանությունը: Կարելի է առանց վարանելու ասել, որ այս հատվածի թարգմանությունն մեջ Բոյաջյան-թարգմանչուհին պահպանել է բնագրի հարազատ շունչը, ըմբոստ տարերքը, պատկերների արտահայտչականությունը, բառերի երաժշտական հնչեղությունը: Նույն հանդեսի 1913 թ. № 4-ում գետեղված է նաև Րաֆֆու «Հարեմից» Բոյաջյանի մեկ այլ, այս անգամ չափածո թարգմանություն՝ «Բալլադ» խորագրով: Հայտնի է նաև, որ Րաֆֆուն նվիրված հոբելյանական հանդեսներից մեկի ժամանակ Բոյաջյանը արտասանել է Րաֆֆու «Ձայն տուր, ո՛վ ծովակ» հայրենասիրական հանրահայտ բանաստեղծությունը իր թարգմանությամբ:

Բոյաջյանի թարգմանական համառ ջանքերի արդասիրը եղավ այն, որ աստիճանաբար հրատարակության պատրաստեց հայկական ավանդավեպերի, ժողովրդական պատումների ու բանաստեղծությունների մի մեծարժեք հատընտիր: Այդ ժողովածուն լույս տեսավ 1916 թ. վերջերին՝ «Հայկական լեզենդներ և բանաստեղծություններ» խորագրով: Գրքի ներածությունը գրել էր անվանի պատմաբան ու գիվանագետ լորդ Զեյմս Բրայսը: Նրանում ընդգրկված էին թարգմանություններ՝ պատմահայր Խորենացու ժողովրդական առասպելներից սկսած մինչև Ա. Չոպանյանի «Երջանկություն» բանաստեղծությունը: 34 հեղինակների 67 բանաստեղծություններից և արձակ գործերից 60-ը թարգմանել էր ինքը՝ Բոյաջյանը, իսկ մնացածները՝ Ալիս Ստոուն Բլեկուելը: Հատընտիրում գետեղված էր նաև Րաֆֆու ավագ որդի Արամ Րաֆֆու՝ հայ բազմադարյան գրականության տեսությունը նվիրված հոդվածը: Գրքում տեղ էին գտել 12 գեղատիպ նկարներ՝ մեծ մասամբ հայկական լեզենդների թեմաներով: Նրա կազմի ձևավորումը, ինչպես և նկարազարդումներն ու հայկական լեզենդների մոտիվներով ստեղծված զունագեղ ու տպավորիչ նկարները (որոնց շրջանակները ծաղկազարդված են հայկական մանրանկարչության բոյաջյանական ընդօրինակումներով) և, վերջապես, ժողովրդական ավանդավեպերի, միջնադարյան հայրենների ու ժամանակակից բանաստեղծության գոհարների վարպետ թարգմանությունները ընթերցողին համակում են հայրենասիրական ջերմ զգացումով:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 39:

Անգլիական կենտրոնական ամենաազդեցիկ օրաթերթերն ու ամսագրերը («Քոնսերվատիվիստների թերթեր» իր 1916 թ. դեկտեմբերյան համարում, «Փեյ-մեյզազետը» նույն թվականի նոյեմբերի 10-ի համարում, «Սաթերդի թերթեր»՝ դեկտեմբերի 9-ի համարում, «Նեյշընը»՝ նոյեմբերի 25-ի համարում, «Սքոթս-մենը»՝ նոյեմբերի 18-ի, «Մանչեստր զարդիները»՝ դեկտեմբերի, «Ազիաթիք թերթեր»՝ նոյեմբերի, «Մորնինգ պոստը», «Սիեթլ թերթեր», «Քայմսը» և այլն) ընդարձակ գրախոսականներով հանգես գալով, բարձր գնահատեցին ժողովածուի թարգմանական, գրական-գեղարվեստական արժանիքները: «Անհնար է կարգալ ժողովածուի քնարական շնչով ու երաժշտականությամբ հագեցված բանաստեղծությունները, առանց գիտակցելու այն, որ ընտրությունը կատարված է մի թարգմանչուհու կողմից, որը օժտված է տվյալ երկրի գրականության բնորոշ կողմերի խորիմացություններ: Ընդգրկված գործերը ներկայացված են այնպիսի հմտությամբ, որ նույնիսկ մի լեզվից մյուսը փոխադրված բանաստեղծություններում պահպանվել են բնագրերի յուրահատուկ ոգին ու հմայքը», — գրում էր, օրինակ, «Սքոթս-մենը»: Գրքի նկարագրողումների մասին այդ թերթում ասված էր. «Յո. Բոյաջյանի գունավոր մանրանկարները կներկայացնեն ճարտար և հաճելի միացումը նորաձև զարդանկարի և ավանդական հայկական զարդի»⁷: Անտարբեր շմնաց նաև սփյուռքահայ պարբերական մամուլը:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում Բոյաջյանը լույս ընծայելով այդպիսի մի ժողովածու հայ ժողովրդի կյանքի սոցիալ-քաղաքական անբարենպաստ պայմաններում և որո՞նք էին գրքի ստեղծման զրգարատճառները: Այդ հարցերի պատասխանը գտնում ենք Բոյաջյանի՝ Ա. Չոպանյանին ուղղված նամակներից մեկում, որտեղ նա գրում է. «Գրքին նպատակը նախ բարոյական է, քան ողորմական, այսինքն՝ հայերը ծանոթացնել իբրև հին ժամանակների վեր զարգացած և գրականություն ունեցող ազգ մը: Գիտեմ, որ այս Ձեր ալ նպատակը եղած է միշտ, այնպես որ, վստահ եմ, թե պիտի ընդունիք տեսակետս»⁸:

Հայ ժողովրդի նկատմամբ սանձաղերձած կոտորածները և դրանց նկատմամբ եվրոպական քաղաքական գործիչների սառնասրտությունն ու անտարբերությունը հիմնովին խախտեցին Բոյաջյանի հավատը «քաղաքակիրթ մայրցամաքի» դիվանագետների հանդեպ: Բոյաջյանը, այլևս արևմտյան դիվանագիտությանը հավատ չընծայելով, իր ժողովրդի ղոյատեման անուրանալի երաշխիքը համարեց նրա հոգևոր գանձերը, որոնք անհրաժեշտ էր զարգացած երկրների լայն խավերի ճանաչմանը ներկայացնել:

Արձակ ստեղծագործություններից բացի Բոյաջյանը անգլիական սլարբերական մամուլում հանդես եկավ մի շարք ուշադրավ բանաստեղծություններով, որոնց պսակը հանդիսացավ «Հայաստանի սերը Շեքսպիրին» հայրենասիրական բանաստեղծությունը: Կերչինս նա արտասանեց 1916 թ. մայիսին, Շեքսպիրի մահվան 300-ամյակին նվիրված անգլո-հայ կոմիտեի Լոնդոնում կայացած միտինգում, որտեղ այդ ստեղծագործությունը մրցանակի արժանացավ և տպագրվեց «Պատվո գրքում»: Լնդամենը շորս քառատողից

⁷ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1922, N 20, էջ 655:

⁸ ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի ֆոնդ, 1-ին բաժին, գ. 6368, թ. 1:

բաղկացած այս գողտրիկ բանաստեղծության մեջ հեղինակն այն միտքն է արտահայտում, թե հայերը, որոնք Շեքսպիրի անմահ գործերի առաջին թարգմանիչներից ու գնահատողներից են, Շեքսպիրի շիրիմի վրա գնում են իրենց ճակատը զարգարող փշե պսակը, որը սակայն մերկ չէ, այլ զարդարված է հայ ժողովրդի «արցունքներով մարդարտյա և գոհար»:

Շեքսպիրին նվիրված Անգլիայի ազգային մեծ տոնի ժամանակ, նշանավոր արվեստագետների և դիվանագետների ներկայությամբ, անգլիացի «դափնեկիր բանաստեղծ» Թոմաս Հարդիի միակ բանաստեղծության հետ արտասանվում է նաև Բոյաջյանի այս ստեղծագործությունը, մեծ բավականություն պատճառելով ներկաներին: Վ. Թեքեյանը 1917 թ. այդ բանաստեղծությունը թարգմանում է հայերեն և զետեղում Կահիրեի «Արև» օրաթերթում⁹:

1920-ական թթ. Բոյաջյանի գեղանկարչական գործերը ցուցադրվում են նաև Գերմանիայում: Այդ առիթով դերմանական «Դեր Աար» պատկերազարդ հանդեսում լույս է տեսնում դոկտոր Հանս Ֆրանգոթ Շիհորնի «Հայ արվեստագիտուհի մը» ծավալուն և բովանդակալից հոդվածը: Հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձություններին նվիրված ընդհանուր ակնարկից հետո, որտեղ նա Հայաստանը ներկայացնում է որպես հնամենի մշակույթի երկիր, որը մարդկության քաղաքակրթության օրրաններից մեկն է հանդիսանում, գերմանացի արվեստաբանը գրում է, որ Բոյաջյանը «հազվագյուտ կարողություն մը ունի յուրաքանչյուր ազգ իր ինքնուրույն տիպով նկարելու: Իր ուշադիր զննությունը կը թափանցե յուրաքանչյուր առարկայի մինչև վերջին գիծը և կարտահայտե զայն կատարյալ գեղեցկությամբ, արտաքո կարգի լավ տիրելով գույներու և լուսո վրա: Ըլլա Արմեն Օհանյան՝ հայ կաթավչուհին, ըլլա հունգարացի ազնվական մը, ըլլա զվարթ ֆրանսացի կին մը, ըլլա շվեդացի կամ իռլանդացի երիտասարդ աղջիկ մը, միշտ կը հաջողի մեր արվեստագիտուհին նկարագրական տեսակետով անհատականը իր հայեցվածին մեջ ամփոփել և զայն պայծառորեն պարզել»¹⁰:

Մեծ ընդմիջումից հետո, 1924 թ. վերջերին, Բոյաջյանը հրատարակեց իր ինքնուրույն գրական-գեղարվեստական գլուխ-գործոցը՝ «Գիլգամեշը», «Հավիտենական իղձի երազը» ենթավերնագրով: Գրքի նյութը վերցված էր հին արևելքի դիցաբանության մեջ հայտնի ասուրա-բաբելական էպոսից, որը բազում տարբերակներ ունի համաշխարհային գրականության մեջ: Ավանդավեսը զրված էր շափածո թատերգության ձևով: Գիրքը զարդարված էր հեղինակի կատարած 15 գունավոր նկարներով: Առաջաբանը գրել էր Բրիտանական թանգարանի բաբելոնական մասի դիրեկտոր էռնեստ Բյուչը: Նա զրքի գեղարվեստական արժանիքների մասին գրած իր խոսքը հետևյալ կերպ էր ամփոփել. «Այս ներկա հատորը ինձ կը թվի թե մեկն է այն հազվագյուտ գործերեն, ուր բանաստեղծությունն ու գեղարվեստը՝ որպես իրարու նաժիշտ կը գործեն ականհայտնի հաշտությամբ»¹¹:

Բոյաջյանի այս ստեղծագործությունը, որ անհանգ բանաստեղծության ձևով է զրված, պատկերավոր խոսքի մի գեղեցիկ կերտվածք է: Բանաստեղծուհու գրելաոճը, ինչպես շեքսպիրյան-միլտոնյան դասական շափածոյին է հատուկ, հանդիսավոր արարողության նման լուրջ է ու առնական: Գիտելիքների

⁹ «Արև», Կահիրե, 1917, № 126:

¹⁰ Տե՛ս «Հայ կին», Բեյրութ, 1922, № 14, էջ 995:

¹¹ Տե՛ս «Երիտասարդ հայուհի», Բեյրութ, 1954, № 1, էջ 8:

մեծ պաշարը, բանաստեղծական խառնվածքը, գեղարվեստական արտահայտչամիջոցների վարպետ կիրառումը բանաստեղծուհուն հնարավորություն են ընձեռել դիցաբանական «կես աստվածային» կերպարները կերտել խորապես մարդկային գծերով: Մարդկության պատմության վաղ արշալույսին հյուսված այս շքնաղ դյուցազներգությունը բանաստեղծուհու վարպետ գրչի տակ նոր իմաստ ու հնչեղություն է ձեռք բերել, խորապես հագեցվելով համամարդկային խոհա-փիլիսոփայական մտորումներով ու զգացմունքներով: Աստվածային հավիտենական կյանքի ձգտման գիլգամեշյան ամենամարդկային իղձը, կյանքի և մահվան, հավերժի և անցողիկի անլուծելի առեղծվածը, որը յուրաքանչյուր բանական էակ իր ամենօրյա խոհերի ու խորհրդածությունների պահին փորձում է ըմբռնել և մեկնաբանել, Բոյաջյանի թատերգության մեջ լուծվել են հօգուտ կյանքի մշտնջենականության և ի հաստատումն հավերժի հարատևության:

Լոնդոնի գրական քննադատները, ավանդավեպի գեղագիտական արժանիքները դրվատանքի առարկա դարձնելով, Բոյաջյանի «Գիլգամեշը» գնահատեցին որպես «անչափ հաջողակ և արժեքավոր գործ»: Անգլիայի գրեթե բոլոր գրական, հասարակական-քաղաքական օրաթերթերն ու ամսագրերը («Լոնդոն, թայմս», «Մանչեստրըր գարդիլը», «Բուքման ջորնըլ», «Մորնինգ պոստ», «Քոնթեմփորերի ռեվյու», «Գրաֆիկ», «Սքոթսմեն» և այլն) հանդես եկան հետաքրքրական գրախոսականներով՝ բարձր գնահատելով Բոյաջյանի երկը: «Գիլգամեշի» մասին գրախոսականներ տպագրեցին նաև գերմանական, իտալական, հունական, ֆրանսիական, նորվեգական, հայկական մի շարք թերթեր և ամսագրեր:

Լեզի Գոլանզը, որը Բոյաջյանի մտերիմ բարեկամներից էր, վկայում է՝ թե Բրիտանական թանգարանի տնօրեն Ֆրեդերիկ Քենընը «Գիլգամեշը» ձեռքն առնելով, ընթերցանությամբ այնպես է կլանվում, որ հափշտակված մինչև վերջ մի շնչով կարդում է այն և հիացած դիմում կնոջը. «Ինչպես է նա կարողանում ալսպես գրել, երբ լրիվ անգլիացի չէ. ժամանակակից Անգլիայի գրողների մեջ շատ քչերը կարող են անգլերեն լեզուն այնպես գործածել, ինչպես օր. Բոյաջյանը»¹²:

«Գիլգամեշը» Բոյաջյանին միջազգային մեծ ճանաչում բերեց և ամրապնդեց Բոյաջյան-բանաստեղծուհու համբավը:

1923 թ. Բոյաջյանը մեկնում է Իտալիա, որտեղ, իր կտավների ցուցահանդեսները կազմակերպելուց բացի մոտիկից ուսումնասիրում է հռոմեական պատմական անցյալի և հատկապես վերածնության դարաշրջանի գեղարվեստի մեծ վարպետներ Լեոնարդո դա Վինչիի, Միքելանջելոյի, Ռաֆայելի, Տիցիանի, Դանթեի և այլ գրողների, նկարիչների, քանդակադործների և ճարտարապետների ստեղծած անմահ գլուխ-գործոցները: Բոյաջյանը հատկապես երկար է մնում Հռոմում, Վենետիկում, Նեապոլում, Ֆլորենցիայում: Լոնդոն վերադառնալով, նա թղթին հանձնեց իր տեսածը և խորապես ապրածը: 1926—1927 թթ. Բոյաջյանը հանդես եկավ «Հայաստանի կոչնակում»՝ «Իտալիո հրապույրը» խորագիրը կրող մեծ և արժեքավոր հոդվածաշարով: Վենետիկում Բոյաջյանը հանդիպում է Ավ. Իսահակյանին և ջերմ զրույց ունենում նրա հետ: Ապա այցելում է Ս. Ղազար կղզին:

¹² Տե՛ս «Պայքար», նոր տարվա բացառիկ, 1958, էջ 260:

1928 թ. փետրվարին Բոյաջյանը մեկնում է Եգիպտոս, որտեղ կազմակերպում է իր նկարների անհատական ցուցահանդեսը, իսկ 1929 թ. ապրիլի 3—27-ը Լոնդոնի Վեստմինստերյան պալատի Աբբայական պատկերասրահում բացվում է նրա ամենածավալուն ցուցահանդեսը: 57 ուշագրավ կտավները ընդգրկում էին գեղարվեստի բոլոր ճյուղերին վերաբերող գործեր, ըստ որում արդեն ճանաչում գտած դիմանկարներից («Զորավար Անդրանիկը», «Մադոննան», «Հայ վարդապետը», «Ջովիակահար Հայկ Կյուտենյան» և «Թր. Ջին Հոմը Երևակայական զգեստի մեջ») բացի դահլիճում ցուցադրված էին «Գիլգամեշի» նկարազարդումները և Օմար հայամի ուրբալիների մոտիվներով արված զարդանկարները: Բնանկարներից ներկայացված էին՝ «Կապրի», «Կապրիի ծաղիկները», «Իտալական տեսարան», «Վենետիկյան ջրանցք», «Արևոն Ֆլորենցիայում» և «Հայկական եկեղեցին Ս. Ղազար կղզում, Վենետիկ» կտավները:

«Հայաստանի կոչնակի» 1929 թ. 41-րդ համարում ղեկավարված Հովհաննես Ավագյանի հոդվածից տեղեկանում ենք, որ Լոնդոնում անցկերեն հրատարակվող «Մասիս» ամսագիրը իր նույն թվականի № 7-ում ջերմությամբ է խոսում այս նկարահանողի մասին և մեջբերում տեղական անգլիական մամուլի կարծիքը, «որ կը պանծացվի մեր նկարչուհին տաղանդը»:

1930 թ. Բոյաջյանը երկրորդ անգամ է այցելում Հունաստան: Այստեղ հունական բազմաթիվ տեսարաններ պատկերելուց բացի ստեղծում է իր «Աթենա կը հյուրընկալե Անահիտը» կտավը, որը թուրքական լծից Հունաստանի ազատագրության հարյուրամյակի տոնակատարության ժամանակ հայկական համայնքի անունից նվիրում է Հունաստանի վարչապետին:

Արդեն ծերունագարդ տարիքում Բոյաջյանը կատարեց իր հոգու պարտքը՝ Ամերիկայում հրատարակելով «Աբու-Լալա-Մահարու» թարգմանությունը, որը Վալերի Բյուսոլի ուսերեն թարգմանությանը համարժեք գործ է: Այդ է վկայում Ամերիկայում պոեմի թարգմանության մի քանի անգամ վերահրատարակվելու փաստը: Նույն բախտին արժանացավ նաև «Հայկական լեզնեղներ և բանաստեղծություններ» ժողովածուն: Արդարացի էր «Հայաստանի կոչնակի» խմբագիրներից Ա. Պետիկյանը, երբ իր շաբաթաթերթի էջերում գրում էր. «Ինչ որ Զոյանյան ըրավ ֆրանսացվոց և կամ ֆրանսախոս ժողովուրդի մը մեջ, նույնը ըրավ Զ. Բոյաջյան անգլիացվոց և անգլիախոս ժողովուրդին համար: Երկուքն ալ Եվրոպայի երկու ոստաններուն մեջ, մին Փարիզի մեջ, մյուսը Լոնդոնի մեջ, հայ կյանքին, մտքին, նկարագրին և մշակույթին արժան ընտիր թարգմանները եղան»¹³:

Կյանքի վերջին շրջանում Բոյաջյանը գրել է նաև բազմաթիվ բանաստեղծություններ, որոնք մասամբ տպագրվել են Եվրոպայի և Ամերիկայի անգլերեն պարբերականներում, մասամբ էլ, ձեռագիր վիճակում ղեռ մնում են Ա. Պետիկյանի անձնական գրադարանում: Վերջիններս, Պետիկյանի իսկ ընդունումով, «ինքնատիպ ոտանավորներ են, որոնք առույգություն մը ունին, նաև վեհություն մը»:

Արգասավոր եղավ նաև գրականագետ-բանասեր Բոյաջյանի գրիչը: Նա շահեկան ուսումնասիրություններ է գրել Շեքսպիրի, Բայրոնի, Եվրիպիդեսի, Մայլը Արլենի, Բաֆֆու, Իսահակյանի մասին: Բանասիրական հետաքրքիր

¹³ «Հայաստանի կոչնակ», 1943, № 34, էջ 800.

գործեր են հատկապես «Հայ և անդլիական բանաստեղծական մի քանի նմանությունների մասին», «Ժողովրդական իմաստությունն ու սրամտությունը Մերձավոր Արևելքում» և «Լույս» խորագիրը կրող աշխատությունները: Վերջինիս մեջ Բոյաջյանը մի կողմից նարեկացու, Շնորհալու, Երզնկացու, Թըլկուրանցու, Քուշակի, Սայաթ-Նովայի, մյուս կողմից՝ Շեքսպիրի, Միլտոնի, Ջեյմս Շրրլիի, Թեննեսոնի առանձին ստեղծագործությունների մեջ ընդհանուր գծեր է հայտնաբերում:

Արձակագիր Բոյաջյանը 1947 թ. ծրագրեց գրել «Պառլամենտը երկնքում» վեպը, որը, հեղինակի կարծիքով, պետք է իր ստեղծագործությունների գլուխգործոցը լիներ: Սակայն առաջին գլուխը գրելուց հետո հուսալքվեց, հոգեկան տատանումներ ունեցավ և շահավատաց, թե այն կարող է հրատարակվել: Ա. Պետիկյանը հետևյալ կերպ է բացատրում այդ վեպը անավարտ թողնելու հանգամանքները. «Այս գործի ներշնչումը աշխարհի խռովյալ և անկյալ վիճակը պիտի ըլլար և իր կողմն անզուսպ պոռթկում մը՝ այն առաջնորդներու դեմ, որոնք հանուն «արգարության և բարոյականության» ամեն տեսակ շարիք և բարբարոսություն կը գործեն առանց խղճի և ամոթի», կրսեր ապրիլ 23, 1950 թվականի նամակում... Այս ծրագրյալ վեպը սկսելեն հետո, չի շարունակեց և շավարտեց բացահայտ պատճառներով, բայց առավելապես հուսահատ ըլլալով անոր տպագրության կարելիության մասին, նույնիսկ առաջին գլուխը գրելեն հետո, 1947, նոյեմբեր 10-ին ըսած էր իր նամակին մեջ. «Ինչպես կարող է մարդ մի մեծ և դժվար գործ կատարել, երբ զգում է, որ այն իվերջո կդատապարտվի օյրման (հրո ճարակ կդառնա)»¹⁴, Իսկ Ա. Սաֆրաստյանին ուղարկած մի նամակի վերջում նա գայրույթով գրում է. «Ծիշտն ըսած, ամբողջ խնդիրեն զզված եմ: Այս սրիկաներուն հետ գլուխ ելլել անկարելի է, քանի որ երկիրը և մամուլը իրենցն է»¹⁵:

Զբաղել Բոյաջյանը իր համոզմունքներով ջերմեռանդ խաղաղասեր էր, պատերազմի հակառակորդ, խաղաղության գործի մարտիկ: Նա անձամբ ծանոթ էր խաղաղության կողմնակից մեծանուն շատ անգլիացի մտավորականների և ճանաչված պետական գործիչների հետ:

Գարասկզբի գաղութահայ հասարակական առաջավոր գործիչների նման Բոյաջյանը ի վերջո հանգեց այն իրավացի եզրակացության, որ «հալերը իրենց ապահով են զգալու միմիայն Ռուսաստանի հովանավորության ներքո»: Խանդավառությամբ ընդունելով սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, ուրախանալով Սովետական Միության ձևաբերած ամեն մի նվաճումով, նա եռանդուն պայքար էր մղում այն բոլոր մարդկանց դեմ, ովքեր միտումնավոր կերպով փորձում էին վարկաբեկել կոմունիստներին և հակասովետական ամեն կարգի հերյուրանքներ տարածել խորհրդային երկրի հասցեին՝ ձգտելով նսեմացնել վերջինիս նվաճումները, ապակողմնորոշել տարբեր երկրներում ապրող նրա անշահախնդիր բարեկամներին: Բոյաջյանը մասնավորապես իր պայքարը ուղղում էր սփյուռքահայ այն գործիչների դեմ, որոնք չէին հաշտվում Խորհրդային Հայաստանի ստեղծման փաստի հետ և նույնիսկ տեղորոշական ակտեր էին կազմակերպում խորհրդային երկրի նկատմամբ

¹⁴ «Պայքար», նոր տարվա բացառիկ, 1958, էջ 263:

¹⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, № 412, ց. 1, գ. 1537, թ. 2:

բարյացակամորեն տրամադրված, նրա նվաճումներով ուրախացող և ոգևորվող հայ առաջադեմ հասարակական գործիչների դեմ:

Բոյաջյանը ցույց էր տալիս, որ հայ ժողովուրդը իր անվտանգությունն ու բարգավաճումը կարող է ապահովել միայն Սովետական Միության կազմում, ուսու և բազմազգ այլ ժողովուրդների ու հայ ժողովրդի միջև կնքված եղբայրական անխախտ դաշինքի հիման վրա: «Արդյոք մեր արտասահմանի «քաղաքագետները» կմտածե՞ն թե Հայաստանի վիճակը ինչ կըլլա, եթե Ռուսաստանն իսկվին, կամ կասկածանքի առիթ տան իրեն: Մեր ազգակիցները, որոնք իրենցմե տարբեր մտածողները կսպանեն, արդյոք մոռցա՞ծ են, որ միայն, բոլշևիկ կառավարության միանալն էր, որ Հայաստանը աղատեց անգլիացվոց և ֆրանսացվոց ոտնակոխ ըլլալե, երբ ասոնք փորձեցին այդ ճամփայով հարձակում ընել բոլշևիկներուն վրա»¹⁶, — գրում էր նա:

Սովետական Հայաստանի ջերմ երկրպագու Բոյաջյանը հաստատապես կանգնելով մեր երկրի նվաճումները լայնորեն պրոպագանդելու հայրենասիրական դիրքերում, իր սփյուռքահայ բոլոր հայրենակիցներին խորին համոզմամբ կոչ էր անում. «Արտասահման գտնվող հայերը պետք է Հայաստանի կեդրոնական կառավարությունն ընդունին և պաշտպանին, եթե կփափագին այս նոր Հայաստանը պահել և զորացնել», որ «Հայաստանի ապահովությունը և զարգացումը ուղող հայեր պետք է ... իմանան, որ սովետական հանրապետություններու միացումեն դուրս բարեկամ և պաշտպան շունին աշխարհի մեջ»¹⁷:

ЗАБЕЛ БОЯДЖЯН

(К 100-летию со дня рождения)

Т. Г. ХОРШИДЯН

(Р е з ю м е)

Одна из видных представительниц западноармянской интеллигенции Забел Бояджян (1873—1957) выступила как литературный и общественный деятель в конце XIX—начале XX вв.

Получив блестящее образование и владея несколькими европейскими языками, З. Бояджян все свои знания и талант писателя, публициста, филолога, переводчика, драматурга и художника посвятила пропаганде в европейской среде культурных ценностей, созданных армянским народом в течение многих веков. Ее перу принадлежат множество публицистических статей, исследования о ряде сочинений Шекспира, Байрона, Еврипида, Раффи, Исаакяна, роман «Естер», переводы произведений Раффи и Исаакяна на английский язык, в частности известной поэмы Исаакяна «Абу-лала-Маари». Бояджян издала на английском языке также сборник «Армянские легенды и стихи», в котором помещены ее переводы 67 произведений 34 армянских авторов, начиная от Мовсеса Хоренаци до современных армянских поэтов и писателей.

Забел Бояджян с радостью приветствовала победу Советской власти в Армении и до конца своей жизни оставалась на позиции защиты Советской Армении и пропаганды ее достижений.

¹⁶ «Հայաստանի կոչնակ», 1934, № 4, էջ 83:

¹⁷ նույն տեղում: